Արձանագրություն N 3

ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-19/16 ծածկագրով ապրանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 11.12.2019թ.
ժամը 16:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Գրիգորյան
Հանձնաժողովի անդամներ՝ Օ. Ներսիսյան
Լ. Սարիբեկյան
Կ. Բարսեղյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հարությունյան
Բացակայում էր՝
Հանձնաժողովի անդամ՝ Ժ. Մելքոնյան

1. ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-19/16 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի և ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման մասին

(Մ. Գրիգորյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ 04.12.2019թ.

ա) հարցում էր ուղարկվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) գնման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ: Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն համաձայն որի՝ մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ:

բ) ծանուցվել էր առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ <<Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի>> ԱՁ-ին (այսուհետ՝ Մասնակից)՝ ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, որոնք սահմանված ժամկետում ներկայացվել են:

1.2 Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովի 11.12.2019թ. ժամը 10:00-ի նիստին արձանագրվել է, որ Մասնակցի 3-րդ չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պահաջներին:

1.3 Համաձայն Կարգի 47-րդ կետի՝ 11.12.2019թ. ծանուցվել է Մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունը: Շտկված փաստաթղթերը Մասնակցի կողմից ներկայացվել են նույն օրը ժամը 12:25-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

2. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Մ. Գրիգորյան)

2.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 6-րդ կետը և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքները և ընտրված մասնակից ճանաչել <<Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի>> ԱՁ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Մ. Գրիգորյան)

3.1 Հիմք ընդունելով Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, ինչպես նաև սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, գնահատող հանձնաժողովը որոշում է անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել արձանագրության 2.1 կետում նշված մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

4. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Մ. Գրիգորյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Մ. Գրիգորյան

Անդամ՝ ---------- Օ. Ներսիսյան

---------- Լ. Սարիբեկյան

---------- Կ. Բարսեղյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Հարությունյան